Արձանագրություն N 3

«ՁԿ-ԳՀԱՊՁԲ-18/9» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան, Հալաբյան 31/2 «07» «03» 2018թ

ժ.14:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Սաղաթելյանը

Հանձնաժողովի անդամներ՝ Ս. Ղուկասյանը,Տ. Վարդանյանը

Հանձնաժողովի քարտուղար՝ Հ. Ղազարյանը

1. Գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորումը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին

(*Տ. Սաղաթելյան*)

Ընդունել ի գիտություն, որ.

- Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ «ԷԿՈՄԻՔՍ» ՍՊԸ-ին, «ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ-ին, «ԷՔՍՊՐԵՍ ՇԻՆ» ՍՊԸ-ին 01.03.2018թ. ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը ներկայացնելու մասին, որոնց կողմից համապատասխան փաստաթղթերը ներկայացվել են հրավերով սահմանված ժամկետներում:

- 01.03.2018թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում է ներկայացվել՝ «ԷԿՈՄԻՔՍ» ՍՊԸ-ի, «ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ-ի, «ԷՔՍՊՐԵՍ ՇԻՆ» ՍՊԸ-Ի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը, ընդ որում ՝ եթե ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին չի տրամադրում հարցման մասին եզրակացություն, ապա մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող:

- ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից հարցման եզրակացությունը ներկայացվել է սահմանված ժամկետներում:

- Հանձնաժողովի քարտուղարի կողմից 06.03.2018թ. առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և Հայաստանի Հանրապետության ԿԱ ՊԵԿ-ից ստացված եզրակացությունը տրամադրվել է հանձնաժողովի անդամներին, որի գնահատման արդյունքները բերված են ստորև.

| Մասնակցի հայտի գնահատման չափանիշները | | գնահատականը | Մասնակցի հայտի գնահատման արդյունքները | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Մասնակցի անվանումը | | |
| | | | «ԷԿՈՄԻՔՍ» ՍՊԸ | «ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ | «ԷՔՍՊՐԵՍ ՇԻՆ» ՍՊԸ |
| 1 | «Մասնակցության իրավունքը» չափանիշը | Բավարար Անբավարար | Բավարար | Բավարար | Բավարար |
| 2 | «Մասնագիտական փորձառության» չափանիշը | Բավարար Անբավարար | Բավարար | Բավարար | Բավարար |
| 3 | «Ֆինանսական միջոցներ» չափանիշը | Բավարար Անբավարար | Բավարար | Բավարար | Բավարար |
| 4 | Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը | Բավարար Անբավարար | Բավարար | Բավարար | Բավարար |
| ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ | | Բավարար Անբավարար | Բավարար | Բավարար | Բավարար |

2. Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին

(*Տ. Սաղաթելյան*)

Հանձնաժողովը որոշեց.

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1

Ընտրված մասնակից ճանաչել՝

- 1-10-րդ, 12-39-րդ, 41-56-րդ, 58-63-րդ, 66-75-րդ, 78-րդ, 83-84-րդ, 87-103-րդ, 105-109-րդ չափաբաժինների մասով «Էկոմիքս» ՍՊԸ-ին,
- 11-րդ, 40-րդ, 76-77-րդ, 79-րդ, 85-րդ, 104-րդ չափաբաժինների մասով «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ին,
- 57-րդ, 64-65-րդ, 80-82-րդ, 86-րդ չափաբաժինների մասով «Էքսպրես Շին» ՍՊԸ-ին:

Ընտրված մասնակիցը ճանաչվել է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 2

- Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի | | |
| Նախագահ՝ | | Տ. Սաղաթելյան |
| Անդամներ՝ | | Մ. Ղուկասյան |
| | | Տ. Վարդանյան |
| Քարտուղար՝ | | Հ. Ղազարյան |